Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԸՆԴ ՀՈՎԱՆԵԱՆ
ԱՐԵԳԱԿՆԱՓԱՅԼ ՇԱՀՆՇԱՀԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐ
ԵՒ
ՀԱՇՈՒԵՅՈՅՑ

ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՄԱՍՆԵԼԻ ՔՆՆԵՐՈՒԹԵՆ

1902 — 1903

ուսումնական տարեշրջանի

ԹԱՒՐԻԶ

1903

Թեմական Արաքատիպ Հայոց Ատրպատականի
Ցիշատակ վաղամեռիկ Եղիսաբեթ Մերգաբեկեանի

18 APR 2013
1 MAR 2010
370
361
Р-31
Q351-ЗЕ
1004
15993
Г.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Publicznaja Biblioteka
7/XI 1922
Ереван, Мясницкая
ԱՐՄՆ. ՍՍՀ

ԸՆԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՌԵԳԱԿՆԱՓԱՅԼ ՇԱՀՆՇԱՀԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՒ ՀԱՇՈՒԵՑՈՅՑ

ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅՈՒՀԵՑ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԵՆՆ

ՄԻՋՑԵԼԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՆ

1902 — 1903

ուսումնական տարեշրջանի

ԹԱՒՐԻԶ

1903

Թեմական Արագատիպ Հայոց Ատրպատականի
Ցիշատակ վաղամեռիկ Եղիսաբէթ Մերզաբէկեանի

42-762

ՀՐՈՎԱՐՏԱԿ ՇԱՀՆՇԱՀԻ

(Թարգմանութիւն)

Ամենակարող Աստուծով ծագից «Արթուութեան ու փառքի աստղը և Ամենակալի օգնութեամբ Շահութեան կնիքն ստացաւ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԱՖՖԷՐ ԷԴԻՖԻՆ ՇԱՀԸ։

(կնիք)

Որովհետև շարունակ Մեր արքայական փափագն է եղել տարածելու բարին ու գեղեցիկը և քաջալերելու այն անձանց, որոնք ձեռնամուխ են լինում նմանօրինակ գործերի, այս առթիւ Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը աղերսարկու եղած լինելով առ ոտս օրհնեալ Գահոյից, ընդունելու յիշեալ Ընկերութիւնը Մեր արքայական (սուրբ Ընձեռաւորութեան) պաշտպանութեան ներքոյ, ուստի ցոյց տալու համար Մեր համատարած շնորհը բարձր տերութեան բոլոր հպատակներին, Թագաւորական այս լուսաճաճանչ հրովարտակի ծագմամբ այդ ընկերութիւնը Մեր հովանաւորութեան ներքոյ ընդունելով հրամայում ենք, որ այս առանձին դրօշակաց պատճառով մեծարուի և յոյս ունենայ Մեր ողորմածութեանց վրայ։

Շէվալ ամիս
1318

Ֆերմանը կրում է նաև Էթաբեկը - Ազամ Սադրազամի և Մուշիրը Դովլէի կնիքները։

Բոլորելով ներկայ ուսումնական տարեշրջանը՝ հասարակական սեղանի վրայ է դրուում ընկերութեանս գործունէութեան տեղեկագիրը։

Ինչպէս յայտնի է, անցեալ տարուայ վերջերին Ռուսաստանի Եկատերինոդար քաղաքում երիտասարդ հասակում իր մահկանացուն կնքեց ոմն Սրամ (Ղահրաման) Ղազարեանց, Թիֆլիսցի։ Հանգուցեալը բռնուած լինելով անբուժելի հիւանդութեամբ (թոքախտ) և տեսնելով, որ իւր օրերը համարուած են, կթողնէ տուն, տէր, ընտանիք, ազգական և մանրավաճառութեամբ կոպէկ-կոպէկ շահած դրամը իզուր կվատնուի, մտածեց մահուանից յետ էս տպրել, մի դրական հեռք թողնել։ Այդ անդրագէտ, անուս, բայց աղնուասիրտ հայը մահուան անկողնում յիշեց պարսկահայի կրթական գործի աննախանձելի դրութիւնը և ցանկացաւ լուսաւորութեան մի ջահ աւնկել, լուսոյ մի տաճար կանգնել խուլ և խաւար անկիւններից մէջում։ Իր չափաւոր կարողութիւնը (20-25 հազար ռուբլի) իր մերձաւորներին ու կնոջը մատն հանելուց և 1000 ռ. Տրապիզոնի Նորսկառոյց եկեղեցու սեղանին նուիրելուց յետոյ, ինչպէս ասում են „տուիծի բաժինը՝“ 9000 ռուբ. օրինաւորապէս հաստատուած ու վաւերացուած կտակով նոյն քաղաքի Ծխատէր արժ. Տ. Գարեգին քահ. Բաղդասարեանի ցուցմամբ ու խորհրդով, ո-

ւրին ընկերութիւնս հրապարակաւ իր սրտագին և խորին շնորհակալութիւնն է յայտնում, թողից ընկերութեան իրաւասութեան ու արամադրութեան ներքոյ, որպէս զի իր անունով դպրոց հիմնուի Պաշտպատանի ոևէ հայաբնակ գիւղում, ծախսելով դրամագլխից, որ ըստ կտակի անձեռնմխելի պիտի մնայ, ստացած տոկոսիքը։ Յարմար և իրօք արժանի տեղի ընտրութեան համար, ուր պիտի հիմնուի „Սրամ Ղազարեան“ դպրոցը, լուրջ խորհրդակցութիւնից ու մտքերի փոխանակութիւնից յետոյ՝ վարչութիւնս կանգ առաւ մի բոլորովին „ոչ-ից հեռացած, մտքից մոռացուած“ վայրի վրայ, այդ վայրը Միանդուսաբ գաւառամասն է իր 5 գիւղերով, ուր ապրում են մի բուռն թրքախօս հայեր, ընդամենը 78 տուն, հայեր, որոնք կանգնած կորստեան անդունդի շեմունքին, կորցրել են իրանց ազգային առանձնայատկութիւնները և լեզուով, սովորութիւններով, նիստ ու կացով ու հագուստի տարազով չեն զանազանուում շրջապատող տարրից...։ Նախնական պատրաստութիւնների համար հոգացուել է և յարմար ուսուցիչ փարձուել։ Դպրոցն առաջիկայ ուսումնական տարեշրջանին կբացուի Թովլալար գիւղում, որ կենդրոն է միւս գիւղերի։

Չնայելով որ գաւառական դպրոցների թիւն մէկով աւելացաւ, այնու ամենայնիւ կարիքը շատ ու շատ մեծ է. նա բարձրագոյն կանգնած է իր բոլոր աշխատութեամբ։ Բազմաթիւ գիւղեր դուրկ

են ուսման ու կրթութեան կենարար լոյսից։ Պարսկահայ գիղջուկը խարխափում է տգիտութեան թանձրամած խաւարում, նա կորաղլուխ կանգնած է անհեսական քայքայման առաջ։ Թէ և ընկերութիւնը, յենակէտ ունենալով հայ ժողովրդի նիւթական և բարոյական աջակցութիւնը (այդ յուսով էլ ապարէզ է նետուել), հեռվհեռ վերձեռնում է իր դուրդուրած ու փայփայած գաղափարներին և բարոյապէս վարձատրուած համարում իրան, բայց և այնպէս թեմիս կարիքները այնքան ծանր են, իրերի վիճակն այնքան անմխիթար և արտաքին օժանդակութիւնը դժբաղդաբար զգալի կերպով այնքան նուազել, որ վարչութիւնս ստիպուած եղաւ այս տարի ևս իր հաստատութիւնների թիւը նոյնութեամբ պահելու համար դարձեալ ծանրանալ ընկերութեան գրամագլխի վրայ։ Ներկայ նիւթական անձուկ դրութիւնը միջոց չէ տալիս ոչ միայն դպրութիւն ունեցող դպրոցների թիւն ընդարձակելու և ընկ. գործունէութեան սահմանն ընդլայնելու, այլ և վարչութիւնս ստիպուած կլինի հակառակ իր կամքի նրանցից 2-3 փակելու, եթէ մարդասէր և բարերար ձեռները չգան թեթևացնելու ընկերութեանս ստանձնած դժուարաբար, բայց քաղցր լուծը։

Վերջին հրատարակելով այժմեան Գահակալ Վեհափառ Տաճնշահի հայրական և լուսամիտ կառավարութեան ընկերութեանս շնորհած հրամանակը (Ֆէրման), ինքնաձանաչ և պարտաճանաչ ազգայիններին լուրջ ուշադրութիւնն ենք հրաւիրում այդ խիստ նպաստաւոր հանգամանքի վրայ։ Ժամանակ է արդէն օգտուել այդ հանգամանքից, օգտուել խելացի կերպով, ընդարձակ չափով...։

Ընկերութիւնս լիայոյս է, որ Աստամ Ղազարեանի մարդասէր օրինակին հետևողներ կգտնուին։ Տուէք, պարոններ, լիաբուռը տուէք, հաւատալով, որ դուք ձեզ էք տալիս, ձեր որդոցն էք տալիս։ Աստրպատականի ուսումնասիրաւ և անմեղ հայ մանկան աչքերը ձեր ձեռքին յառած՝ ձեզանից ոչ թէ հաց է աղերսում, այլ լոյս, մի այն լոյս։ Միլիոնները ծնւում են և մեռնում առանց հետք թողնելու, իսկ բարի անունը, ամբիծ յիշատակը անանց են, յաւիտենական...։

Ընկերութեանս ստացած նուէրները

Վարչութիւնս 1902-3 տարեշրջանում շնորհակալութեամբ ստացել է հետևեալ նպաստները.

Տիկին Նաբաթից հանդ. Նանում Նանաջանեանի կտակած դրամը՝ 400 դրան.

Տիկին Սաթենիկ Մինասեանի ձեռքով Թուրքիայում հանգանակուած 300 դրան.

Պ. Տիգրան Ամիրիկեանից Բարառուի և Դիզաթաքէի ուսումնարանների համար 4859 դր. 80 կոպ.

Պ. Սաֆրան Տէր-Օհանեանից Դէրէլէքի ուսումնարանի համար 1200 դրան.

Պ. Ալէքսանդր Մէլիք-Ազարեանից Որմիի ուսումնարանի համար 300 ռբ.՝ 1785 դրամ 70 կոպ.

Արժ. Տէր Աւետիս քահ. Շաղոյեանի ձեռքով յօգուտ գաղթականների Գահիրէում հանգանակուած առաջին անգամ 25 անգղիական ոսկի՝ 1403 դր. 10 կոպ. երկրորդ անգամ 9 անգղիական ոսկի և 18 շիլ.՝ 546 դրամ 96 կոպ.

Մի խումբ հայրենակիցների շրջանում Շահրութում հանգանակուած 300 դրամ.

Պ. Պետրոսեանից (Աստրախան) պ. Աբել Տէր-Զաքարեանի միջոցով 30 կաբ դիրք.

Պ. Համբարձումի Աստաքիէանից Շահրիարի՝ Զհուզ-Քուշան 60 օրինակ, Հայրենի հոգ՝ թարգ. Աստաքիէանի 80 օրինակ, Ս. Սհարոնեանի Խեղճի՝ 60 օրինակ, որ նուիրել են պ. պ. Ալէքսանդր Մէլիք-Ազարեան, Ե. Զոհրաբեան, Մ. Սուլխանեան, Յ. Տիգրանեան և Գ. Տէր-Մարգարեան ցրուելու Աստրատականի գրադարան-ընթերցարաններին և դպրոցներին: Վարչութիւնս յարգելի նուիրատուների ցանկութեան համաձայն այդ գրքերից առ այժմ մի-մի օրինակ ուղարկեց Ղարայի մանկ. և „Կենդրոնական“ գրադարաններին, Լիլաայի մանկ. և „Բոլիան“ գրադ., Մարագայի „Երիցեան“ գրադ. և նրա Միրադուսարայի և Սովուջբուլաղի ճիւղերին, Հաֆթուանի, Սուրբայի, Փայաջուկի, Մահլամի, Ղալասարի, Որմիի, Սուժամբուլի, Ղազանի, Գեարդաբադի, Ուսհնուայի, Դիզաթաքէի, Բաբառուի, Թումանթապի, Համադանի, Սպահանի, Արդաբիլի, Ուշնի, Էնզելիի, և Սաբզուարի՝ ոմանց դպրոցներին, ոմանց գրադարան-ընթերցարաններին:

Յուսում ենք, որ մեզանից անկախ պատճառով նախընթաց տարուայ տեղեկագրի մէջ չէ յիշատակուել, որ ընկերութիւնս դարձեալ պ. Հ. Աստաքիէանի միջոցով ստացել է 200 օր. Ուրախալի, որ նոյնպէս բաշխել է թեմիս գրադարան—ընթերցարաններին ու դպրոցներին: Յարգելի նուիրատուների նեղոգամտութիւնն ենք հայցում այս ոտամոյից գործուած սխալի համար:

Ընկերութիւնս իր հաստատութիւնների համար ստացել է հետևեալ հրատարակութիւնները. մի—մի օրինակ „L'Arménie“, „Մշակ“, „Արաեմիս“, „Արշալոյս“, „Բանասէր“, և „Գեղուն“. վերջին երեքը նուէր:

Ընկերութեանս տուած նպաստները

Ընկերութիւնս ներկայ տարեշրջանում տուել է հետևեալ նպաստները.

Տեղացի խիստ չքաւոր ընտանիքներին, քաղաքում բնակուող գաղթական խեղճերին և հայրենիք վերադարձող գաղթականներին 706 դրամ.

Պ. Մկրտիչ Պապեանի յոբելեանի համար Ադամեան դպրոցի տեսչութեան միջոցով 70 դրամ,

Ղազայի մանկական գրադարանին 70 դրամ:

Թէև գաղթականական մեծ հոսանք չկայ այս

կողմերը, բայց և այնպէս սակաւ չէ պատասխանից հայրենիք և հայրենիքից պատասխան գնացող արկածեալների թիւը, որոնց անցագրի և ճանապարհածախքի համար հոգում է վարչութիւնը ծախսելով Աբժ. Տէր Աբեմելեք քահ. Շաղոյեանի այդ նպատակով հանգանակած գումարից. մնացեալ գումարը կպահուի դարձեալ այդ նպատակի համար:

Ընկերութեան հաստատութիւնները

Որմիի ուսումնարանը

Դերկայ 1902-3 ուսումնական տարեշրջանի սկզբում այս դպրոցը, որ հիմնուել է 1900 թուին, ունէր 18 աշակերտ, որոնց թիւը բարձրացաւ մինչև 26-ի, թէև ցանկացողներ եղան իրանց որդոց ուսումնարան ուղարկելու, բայց նոցա տարիքը 7-ից պակաս լինելով՝ մերժուեցան: Անոնցից 8-ը օրիորդներ էին: Դպրոցն ունէր 2 նախապատրաստական բաժանմունք և 1 հիմնական դասարան: Տարուայ ընթացքում արուել է մի ներկայացում և կատարուել է հանդէս Պարպանանց ազնիւ առթիւ: Ընկերութիւնը հոգացել է ուսումնարանի վերաբերեալ ուրիշ ծախքերն ու պիտոյքները: Դպրոցիս բարերար է Մեծ. պ. Ալէքսանդր Մելիք-Ազարեան, որ պարբերաբար տարեկան 300 ռուբլի նպաստ է տալիս:

Ընկերութեանս ջերմ փափագն է Որմիի դպրոցը, որպէս կենդրոնի, տեսնել բարգաւաճ և ծաղկած գրութեան մէջ, որպէս զի կարողանայ լոյս սփռել շրջակայ գիւղերի վրայ: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է, ինչպէս անցեալ տարուայ տեղեկագրի մէջ էլ նկատուել է, մի օգնական ուսուցիչ, որպէս զի նրանցից մինը միջոց ունենայ որպէս տեսուչ շարունակ այցելել ընկերութեան իրաւասութեան տակ գտնուած բոլոր դպրոցները:

Ռահուայի ուսումնարանը
Որմիի գաւառում

Այս դպրոցն ունէր 36 աշակերտ 3 բաժանմունքով, որոնց թիւը զեկտ. 15-ից հասաւ 45-ի, բայց փետր. 15-ից երկրագործական զբաղմունքների սկսուելու հետ այդ թիւը հետզհետէ սկսաւ նուազել: Բոլոր գիւղական դպրոցներում, սակաւ բացառութեամբ, նկատելի է այդ երևոյթը, որի առաջն առնել եթէ ոչ անկարելի, գոնէ խիստ դժուար է: Դպրոցն ունի իր յատուկ շէնքը, որ հիմնուեցաւ շնորհիւ տեղացիների և ուսուցչի աշխատութեան: Գիւղն ունի 150 տուն բնակիչ:

Այս գիւղն ունի նաև օրիորդաց դպրոց 4 բաժանմունքով, ուր ուսանում էին 41 աշակերտուհի, որոնցից 5-ը ասորուհի: Այս երկսեռ դպրոցների ծախքն ամբողջապէս ծանրացել է

ընկերութեան վրայ։

Իքի-Աղաջի ուսումնարանը

Ոըմիի գաւառում

Տարուայ սկզբին դպրոցն ունէր 10 աշակերտ, որոնց թիւը փետրուարին հասաւ 33-ի։ Դպրոցական շինութեան անպատրաստ գտնուելու պատճառով՝ կանոնաւոր դասաւանդութիւնն սկսուել է նոյեմբերին։ Դպրոցը, որ հիմնուել է 1899-ին, ունէր 4 բաժանմունք և պահւում է միայն ընկերութեան հաշուով։

Բաբառուի ուսումնարանը

Բարանղուղ գաւառում

Գիւղը բոլորովին թրքախօս է։ Դպրոցը բացուել է սեպտ. 17-ին, իսկ կանոնաւոր պարապմունքն սկսուել է հոկտեմ. և տևել մինչ մայիս վերջ։ Դպրոցը, որ հիմնուել է 1898 թ., ունէր 32 աշակերտ 3 նախապատրաստական բաժանմունքով և 1 հիմնական դասարանով։ Բացի նախակրթարանից միւս բաժանմունքներն ազատ խօսում են հայերէն։ Դպրոցը երկսեռ է. աշակերտուհիների թիւը հասնում է 20-ի, երկու բաժանմունքով։ Կանոնաւոր զբաղմունքը սկսուել է նոյեմբերին։ Տեղի են ունեցել երկու հանդէս և աշակերտական զբօսանքներ գիւղի շրջակայքում

ուսումնական նպատակով։ Այս երկսեռ դպրոցի բոլոր ծախքերը 1901—1902-ից սկսած հոգացել է ընկերութեան պատուաւոր անդամ Պեծ. պ. Տիգրան Աֆրիկեանը։

Դիզաթաքէի ուսումնարանը

Ոըմիի գաւառում

Այս երկսեռ դպրոցը հիմնուել է 1898 թուին. այս տարի ունէր 24 աշակերտ, որոնցից 10 աստրի, 3 նախապատրաստական բաժանմունքով և 1 հիմնական դասարանով և 15 աշակերտուհի 3 բաժանմունքով։ Ուսումնարանը բացուել է հոկտեմբերին, իսկ կանոնաւոր պարապմունքները տիրող սաստիկ ցեղի պատճառով սկսուել են դեկտեմբերին։ Այդ կորուստի առաջն առնելու համար ուսուցիչն իր բարեհաճ կամքով տարուայ վերջին 1 ամիս աւելի պարապեց։ Այդ արտակարգ պարապմունքները տևում էին մինչև ճաշ։ Նայելով որ գիւղը թրքախօս և ասորախօս է, բայց և այնպէս գ. և դ. բաժանմունքների աշակերտները կանոնաւոր և ազատ խօսում են հայերէն, գրական բարբառով։ Այս երկսեռ դպրոցների ծախքը 1899—1900-ից մարդասիրաբար ստանձն է առել և հոգում է նոյնպէս Պեծ. պ. Տիգրան Աֆրիկեանը։

Գեարդաբադի ուսումնարանը
Ուրմիի գաւառում

Այս դպրոցը ներկայ տարեշրջանում ունէր 1 հիմնական դասարան, 4 բաժանմունք և 1 ծաղկոց, աշակերտների թիւը հասնում էր 40-ի։ Յաճախել են թէև անկանոն, 8 աշակերտուհի։ Երթևեկում էր նաև 1 կոյր աշակերտ, որ դասերը էր լսում և մասնակցում էր երգեցողութեան։ Պանոնաւոր պարապմունքներն սկսուել են հոկտեմբերին։ Տարուայ ընթացքում ուսուցիչը կազմակերպել է 2 գրական երեկոյթ և տուել է 1 ներկայացում։ Պատարուել է աշակերտական դաշտային զբօսանք, ուր ուսուցիչը բացատրել է բոյսերը, քարերի և հողերի տեսակները և ուսուցել զանազան գիտելիքներ։ Դիւղը զուտ հայաբնակ է և խօսում է ադաւադուած հայերէն։ Դպրոցը բոլորել է իր հնգամեայ շրջանը և պահւում է ընկերութեան հաշուով։

Դէրէլէքի ուսումնարանը
Սովուչբուլաղում

Դպրոցը, որ հիմնուել է 1900 թուին, այս տարի ունէր 19 աշակերտ, 3 բաժանմունքով. Դասաւանդութիւնն սկսուել է հոկտ. 18-ից, տևելով մինչ յունիս 18 (8 ամիս)։ Դպրոցիս բարերարն է Մեծ. պ. Սահիան Տէր-Օհանեանը, որ պարբերաբար տարեկան նպաստ է ուղարկում 1200 զրան։

Թումաթաբի ուսումնարանը
Բարանդուզ գաւառում

Այս դպրոցը հիմնուել է 1901 թուին և ունէր 15 աշակերտ, 3 բաժանմունքով։ Դիւղը զուտ թրքախօս է։ Դպրոցի բոլոր ծախքերը հոգում է ընկերութիւնս։

Աղաղանի ուսումնարանի
Ղարադաղում

Այս դպրոցը, որ 1900 թուին մնաց ընկերութեան իրաւասութեան տակ, այս տարի ունէր 27 աշակերտ, 3 բաժանմունքով։ Բոլոր ծախքերը ծանրացել են ընկերութեան վրայ։ Տարեկան չընչին թոշակագրամը այս տարի, հակառակ ուսուցչի բազմիցս դիմումներին, դիւղի երկպառակութեան շնորհիւ չգանձուեց։ Յաւալի է, որ մի քանի խաւարասէր անձինք իրանց անձնական կրքերին յագուրդ տալու համար դպրոցը կռուածդիկ են շինել, աշխատելով ամեն միջոցներով նրա փակման պատճառ լինել։

Յիշեալ դպրոցներում, որոնցից 6-ը պահւում է ընկերութեան և 4-ը բարերարների հաշուով, ուսանում էին 336 երկսեռ սաներ՝ 256 աշակերտ և 84 աշակերտուհի։ Լանդուել են՝ Կրօն,

Հայոց լեզու, Թուաբանութիւն, Գիտողական ուսում, Հայրենագիտութիւն, Հայոց պատմութիւն, Հայաստանի աշխարհագրութիւն, Ընդհ. աշխարհագրութիւն, Գրութիւն, Երգ, Մարմնամարզութիւն և Ձեռագործ։ Յանկանալով ծրագրի և առարկաների միօրինակութիւն մտցնել դպրոցներում, ուղարկուել է „Բրամեան“ դպրոցի մշակուած ծրագիրը, որպէսզի ուսուցիչները ըստ այնմ զեկավարուեն և ընթանան և իրենց ուսումը շարունակել ցանկացողները հնարաւորութիւն ունենան մտնել քաղաքիս դպրոցների համապատասխան դասարանները։ Վարչութեանս յանձնարարութեամբ Որմի ուսուցիչ պ. Մ. Գ. Պապիկեանը տարուայ ընթացքում այցելել է շրջակայ դպրոցները և իր տպաւորութիւնները հանդերձ նկատողութիւններով հաղորդել վարչութեան։

Ձափաղանց մխիթարական երևոյթ է, որ ուսման ու կրթութեան կենսատու լոյսը հետզհետէ թափանցում է Արպատականի հայ գիւղացու խրճիթը. հայ գեղջուկը սակաւ առ սակաւ ըմբռնում է կրթական գործի յարգն ու նշանակութիւնը, ըզգում է սէր դէպ եկեղեցին ու դպրոցը, հետևապէս ոաք կոխում ինքնաճանաչութեան շաւղի վրայ։

Երկրորդ անգամն է, որ ընկերութեանս դպրոցներից մի քանիսի աշակերտները իրանց ուսուցիչներով բաղդ են ունենում արժանանալ Նորին Բարձրութիւն Գահաժառանգ Իշխանի ողորմած ուշադրութեան։ Որմի և Գեարգաբաղի դպրոցների սանները երդով դիմաւորել են Նորին Բարձրութեան, երբ գարնան իր շրջագայութեան միջոցին բարեհաճել է Որմի ժամանել։

Ընկերութեան Թաւրիզի հաստատութիւնները

Պար ու ձևի արհեստանոցներ. — Ընկերութիւնս նախկին ծրագրով ու ուղղութեամբ այս տարի ևս պահում էր 2 արհեստանոց, Ղարայում և Լիլաւայում։ Ղարայի արհեստանոցում սովորում էին 13 օրիորդ, որոնցից 7-ը թոշակաւոր, 3-ը կիսաթոշակ և 3-ը ձրիավարժ։ Լիլաւայի արհեստանոցում սովորում էին նոյնպէս 13 օրիորդ, որոնցից 5-ը թոշակաւոր, 2-ը կիսաթոշակ և 6-ը ձրիավարժ։ Այս տարի հրապարակական քննութիւն տալով, յատկապէս հրաւիրուած քննիչների ներկայութեամբ, իբրև ընթացաւարտներ վկայական ստացան հետևեալ օրիորդները, 3-ը Ղարայից 1-ը Լիլաւայից.

Օր. Վարսենիկ Թորգոմեան,
,, Հեղինէ Ֆթանդիլեան,
,, Գայիփսէ Նազարեան և
,, Փառանձեմ Մել.-Աբրահամեան։

Ընկերութիւնս պահում էր 2 մանկապարտէզ, Ղարայում և Լիլաւայում։ Մանկապարտէզները դանուում էին կանոնաւոր ընթացքի մէջ։

Առանձին ուշադրութիւն էր դարձրուած ձեռագործների և խաղալիքների վրայ։ Նկարչ. մանկապարտէզներում սովորում էին 73 երկսեռ սաներ, որոնցից 27-ը թոշակաւոր էին, 16-ը կիսաթոշակ և 30-ը ձրիավարժ։ Լիլաւայից դանձուել է միայն 10 երեխայի թոշակ։

Վարչութիւնս իւր խորին շնորհակալութիւնն է յայտնում վարչ. անդամուհի տիկ. Հռիփսիմէ Դրինֆիլդին, որ իր բարեհամ կամքով, առանց վարձի, վարչութեան արամադրութեան ներքոյ դրեց իր սեպհական տունը, ուր 7 ամսից ի վեր գտնուած էր ընկերութեան Ղալայի մանկապարտէզն ու արհեստանոցը։

Ընկերութիւնս ներկայ ուս. տարուայ ընթացքում Ղալայում տուել է՝ Նոյեմբերին մի ներկայացում, տարեմտի երեկոյին տօնածառ և երեկոյթ, բաժանելով երեխաներին խաղալիքներ ու քաղցրեղէն, բարեկենդանին առաջին անգամ Թաւրիզում պարահանդէս և վիճակահանութեան են տրուել կար ու ձևի արհեստանոցների ձեռագործները։

Վարչութիւնս խորին շնորհակալութիւն է յայտնում Աբրահամ և Ս. Ընդայեան երկսեռ դպրոցների տեսչութեան և ուսուցչական խմբի անդամներից նրանց, որոնք սիրով յանձն առան երեկոյթի կազմակերպութեան ծանրութիւնը, մասնակցութեամբ նոյն դպրոցների երգեցիկ երկսեռ

սաների։

Այդ տարեշրջանում ընկերութիւնս ունէր 100 տարեկան, 40 մշտական անդամուհի (մշտական անդամուհիների շարքը մտաւ Թիֆլիսաբնակ տիկ. Վարվառէ Խարխուդարեան) և 12 պատուաւոր անդամուհի և անդամ։

Տարուայ ընթացքում կայացել են 34 վարչական և 4 ընդհանուր ժողով։

Ընկերութիւնս իր պատուաւոր անդամների շարքում դասեց Նիկատերինոդարի ծխատէր արժ. Տէր Դարեգին քահ. Խաղդասարեանին իր ընկերութեան քանիցս մատուցած նիւթական և բարոյական անգնահատելի աջակցութեան համար։

Հաշիւների և գաւառական դպրոցների տեղեկագրերով հետաքրքրուող անձինք կարող են դրաւոր դիմել ընկերութեան վարչութեան և մանրամասն բացատրութիւն ստանալ։

Վարչութիւնս խնդրում է դրամական նպաստ,

Ծանօթ. Ընկերութեան տարեկան անդամ դրուել ցանկացողը պէտք է վճարէ Ռուսաստանի համար 4 ռուբլի, մշտական անդամուհի լինել ցանկացողը — միանուագ 50 ռուբլի. իսկ պատուաւոր անդամներին ընտրում է ընդհ. ժողովը, նայելով նրանց ընկերութեան մատուցած բարոյական և նիւթական աջակցութեան չափին։ Ցանկացողներին ընկ. կանոնագրութիւնը ուղարկւում է ձրի։

դասական առարկաներ, ընթերցանութեան գրքեր, պարբերական թերթեր, նամակ և այլն ուղարկել հետևեալ հասցէով. —

Sosiété unie de bienfaisance des dames Arméniennes de Tauris

Tauris (Perse)

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Վարչութեան անդամոց հինները

Նախագահ՝ Սրբուհի Ամատունի

Գանձապահ՝ Օգսէկ Եղիազարեան

Խորհրդականներ
- Հռիփսիմէ Գրիգորիդ
- Հեղինէ Յօրժ
- Մարան Նազարբէգեան
- Ընծուրիկ Նազարբէգեան
- Մանիա Գրիգորեան

1398/1004

17 Յուլիսի 1908
Թաւրիզ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
ԵՐԵՎԱՆ, Մասնաճյուղ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

		ղրան	կոպ·	ղրան	կոպ·
—		1657	40		
—		4474	85		
ր	—	10242	65		
—	—	2923	67		
—	—	846			
թքը		2596	05		
	״	2755	45		
	״	1956	55		
	״	1008	15		
	״	886	45		
	״	1586	15		
	״	610	15		
	״	716	40		
	״	916	50		
	״	482	05		
ֆար		700			
—	—	70		34428	47
1903				61915	98
				96044	45

ՄՈՒՏՔ — Հաշուեցոյց 1902 թիւ Յուլիս 1 - ից մինչ 1903 թիւ Յունիսի 30 · — ԵԼՔ

	դրան	կոպ·	դրան	կոպ·
Դրամագլուխ առ 1-ն Յուլիսի 1902			66081	93
Ստացուած տոկոսներ — — —	5639	12		
„ Նուէրներ — — —	10795	55		
„ անդամավճարներ —	1235	70		
„ Թոշակադրամներ —	2790			
Տօնածառից արդիւնք — — —	11 07			
Ներկայացումից արդիւնք — —	1218			
Պարահանդէսից արդիւնք — —	1288	40		
Տօնածառի խաղալիք՝ երից արդիւնք	360			
Արհեստանոցներից և վիճակախաղից	5009	45		
Ծախուած դասագրքեր — — —	52			
Գիւղական դպրոցներից արդիւնք —	467	30	29962	52
			96044	45

	դրան	կոպ·	դրան	կոպ·
Արհեստանոցների ծախքը — —	1657	40		
Պարիզից բերուած նիւթեր — —	4474	85		
Զանազան ծախքեր և ռոճիկներ —	10242	65		
Մանկապարտէզների ծախքը — —	2923	67		
Նպաստներ տրուած — — —	846			
Դիլաթաքէի ուսումնարանի ծախքը	2596	05		
Բաբառուի „ „	2755	45		
Որմիի „ „	1956	55		
Թահուայի „ „	1008	15		
Աղաղանի „ „	886	45		
Գեարդաբագի „ „	1586	15		
Թումանթարի „ „	610	15		
Իրի - Աղաջի „ „	716	40		
Դէրէլէքի „ „	916	50		
Գնուած դասագրքեր — — —	482	05		
Թովլալարի ուսուցչին կանխավճար	700			
Կարասիք (կոմոդ) — — — —	70		34428	47
Դրամագլուխ առ 1-ն Յուլիսի 1903			61915	98
			96044	45

«Ազգային գրադարան»
NL0219947

42. 762

361
Р-31